վարտակաւ և գիտութեամբ մեծի Դեսպանին դատաւոր կարգեցան, Ռումելի Գազասքէրի Միր Իզզէթ, եւ նոյն պատուով Խալիլ՝ և Անատոլի Գազասքէրի Մէհէմմէտ, և ընդ նմին Դեսպանն մեծ Տիւրրի Զատէ Ապտուլլահ յառաջին Դեսպանութեան իւրում. նոյնպէս 'ի պաշտօնէից Արքունի դրան վերատեսուչ փոխերանոցի Ահմէտ Շաքիր Փաշա, և մեծ Նախիպն Զէյն էլ Ապիտին, Ֆէթվա էմինի Առսլանի Զատէ Մէհէմմէտ Ռաշիտ, Գուլէլի Սիւլէյման, եւ յարքունուստ՝ Մուստաֆա Մազհար, Իպրահիմ Նուիրակալեան Արքայի, Պէյլիքճի Ահմէտ Աֆիֆ, Ամէտճի Մէհէմմէտ, և քաղաքապետք Դիւանաց: Սոքա ամենեքեան 'ի ժողով գումարեալ, սակայն 'ի նմին ժամանակի չեղեւ հնար բառնալ զխռովութիւնս երկուց ազգաց և վերջապէս 'ի ժամանակի Դեսպանութեան Օմար Խուլուսի Էֆէնտեայ վասն խնդրոցս այսոցիկ կազմեցաւ ժողով առաջի Երեսփոխանաց երկուց ազգաց. Երեսփոխանք Հայոց՝ Փոխանորդն Երուսաղէմի Պօղոս վարդապետ Գրիգորեան, Դիոնէսիոս վարդապետ Կարապետեան, Քեահեայ Կարապետ Գասպարեան, Յովհաննէս Երկանեան, Գրիգոր Գէորգեան, Գասպար Գէորգեան, Անտոն Գլճեան, Ճանիկ Սիմոնեան, Խաչատուր Մարտիրոսեան, Մանուէլ Մկրտչեան:

Երեսփոխանք Յունաց, Երասիմոս Առաջնորդ Թեսաղոնիկեայ, Աթանասիոս՝ Նիկոմիդեայ, Աթանասիոս Քեահեայ Պատրիարքին Երուսաղէմի, Կեսարիոս գանձապետ նորին, Տիմիտրաքի Մանօլեան, Թումպիկ Գարաճեան, Եօրկի Սուլիպիկեան, Խրիսթոյ Մուրատեան, Անանինեայ Քիրեաքոյեան, Անեստի Պարաչքոյեան, Թէոդոս Իսախմատեան, Բանայոդ Թատորեան. սոքա ամենեքեան էին 'ի ժողովի. Հայք ամբաստան լինէին զազգէն Յունաց, որպէս յառաջագոյն գիր աղաչանաց մատուցեալ առ Թագաւորութիւնս իմ աղաչանօք խնդրեալ էին: Հետեւելով հրովարտակացն Սէլիմայ Արքային տուեալ 'ի Թուին Հիճրէթի ٩٢٣ 'ի ժամանակս տիրելոյ Ս. Երկրին այնորիկ, և դաշնագրոյն մեծին Օմարայ տուեալ 'ի ձեռս Յունաց: Ընտրեցին հիմն դնել զերկոսին հրովարտակսն տուեալ Հայոց և Յունաց, որպէս պարզ և բացայայտ գրեալ են 'ի նոսին. 'ի մեծ եկեղեցին Ս. Յարութեան երկոքին ազգքն ըստ օրինաց իւրեանց բաժա-